

շափանիշներուն:

«Պիտի սիրես եղբայրդ կամ ընկերդ քու անձիդ պէս». ըսաւ մեր Տէրը ուրիշ առիթով մը:

Ո՞վ իր ունեցածը պիտի խնայէ իր անձին համար: Եթէ եղբայրդ կը սիրես չես կրնար ունեցածէդ քաժին չհանել եղրօրդ համար: Երէցը կը գանգատէր մինչեւ իսկ պարարտ եզին համար որ մորքուած էր եղրօրը վերադարձին առիթով:

Այս ընթացքն կարելի է հետևեցնել որ երէցը եսասէր նկարագրով լեցուն անձ մը ըլլալու է, որմէ հեռու չեն նաև բարկութիւնը եւ նախանձը: Աւետարանը քան մը չըսեր թէ ան հաշտուցաւ կամ համոզուցաւ իր հօր խօսերէն ու մտաւ տուն եւ ուրախացաւ եղրօր վերադարձին համար:

Սակայն մենք մոռնանք երէցը ու մեր մտքին մէջ մեզի օրինակ վերցնենք կրտսեր որդիին ընթացքը, յատկապէս ապաշխարութեան այս օրերուն:

Սիրելի հաւատացեալներ, Աստուած հայրն է բոլոր անառակ որդիներուն, որոնց դարձին ու զղջման կը սպասէ, զանոնք գրկելու եւ համրութելու համար: Ամէն անգամ որ քրիստոնեայ մը դարձի կու գայ ու կ'ապաշխարէ, պէտք է առանց ամշնալու խոստովանի իր հօրը առջեւ ըսելով. «Ամեղայ յերկինս եւ առաջի քո»: Այն ատեն մեր երկնաւոր Հայրը սիրոյ ժպիտով պիտի դիմաւորէ, գրկէ եւ հայրական սիրոյ եւ ներման համրոյրներ դրոշմէ նակտին վրայ եւ ըսէ իր հրեշտակներուն. «ուրախացէք ինձի հետ, վասն զի այս անառակ որդիս մեռած էր, յարութիւն առաւ. կորսուած էր եւ գտնուեցաւ»:

ԳՈՒՍՏԱՆ ՎՐԴ. ԱԼՃԱՆԵԱՆ

## ԽՈՐՀՈՂԱԿՈՐ ԳԻՇԵՐ

### «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՓՈՔՐԻԿԻՍ»

Եկաւ երկար սպասուած Գիշերը: Փոքրիկս, երբեւէ լսե՞լ ես ծերուկ Գիշերի պատմած հին ու նոր պատմութիւնները: Զարմանո՞ւմ ես: Գիշերը ոչ միայն պատմում է, այլև հմտօրէն բեմադրում է սփանչելի քատերականացուած պատմութիւններ: Հաւատո՞ւ, նա աշխարհի ամենախորհրդաւոր բեմադրիչն է: Նայիր երկինք եւ դու այսօր ականատես կը լինես այդ ամենախորհրդաւոր բեմադրիչի, ամենախորհրդաւոր բեմադրութեանը:

Սիա Գիշերը բացում է տիեզերքի բեմի քաւշէ վարագոյրները:

Բեմականացումը սկսուեց:

Տիեզերքը զարդարուած է հրաշակերտ եկեղեցւոյ պէս: Արարչի անտեսանելի աջը մէկիկ-մէկիկ վառում է հրեշտակների բնակարանի կանքեղները, որ մենք աստղեր ենք կոչում: Ամէն մի փոքրիկ, տիեզերքում իւր կանքեղը ունի . . . Տես-տես, Լուսինը բազմում է իր փառահեղ երկնային գահի վրայ: Ճերմա՞կ-ներմա՞կ նշանը լուսին: Այժմ բոլորը պատրաստ են եւ հնչում է տիեզերքի հինաւուրց մեղեդին: Երկնային երածիշտները իրենց անմարմին շուրբերով եւ աննիւրական նուագարաններով Աստուծոյ գովեն են երգում: Արանք սերովքներն ու քերովքներն են, որ միաձայն

սրբասացութեամբ սադմոսում են. «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձութեամբ . . .»:

Գիտե՞ս, փոքրիկս, մեծահասակ մարդիկ չեն կարող լսել աստուածային այս բարբառը, նրանք վարժուել են իրենց հողեղեն ականչներին: Հոգեւոր այս երգեցողութիւնը լսելու համար պէտք է մանուկ լինել. մանուկները կարող են լսել ամենիթական լսելիքներով: Նրանք պատիկ լոյսի տաճարներն են, որ ոչ միայն լսում են երկնայինների օրհներգութիւնը, այլ տեսնում են փառարանիշներին, նրանց հետ գուարեանում են հոգեւոր այս խրախնանքի մէջ: Որքան երանելի են փոքրիկները, որ դեռ չեն ճաշակել մեղքի դառը սեղանից: Նրանք սեղանակից են հրեշտակներին եւ յաղթական եկեղեցւոյ սուրբերին:

Հրաշքների գիշեր: Ամէն անգամ, երբ հրափայլ Արեգակը իր հրեղեն կառելով սուրբում է ծովի անհունը՝ հանգչելու իւր առագաստի մէջ եւ բարեպաշտօն երաժշտները սկսում են իրենց օրներգութիւնը, գալիս է ծերունազարդ Գիշերը եւ իւր պատմութիւնն է հիւսում զարմանահրաշ արարչագործութեան մասին: Խոկ Լուսինը, աստղերը, տիեզերքի փոքր ու մեծ մոլորակները իրեւ գերազանց դիրասաններ օգնում են նրան, նոյնիսկ կուում ու վիճում են, թէ ո՞վ աւելի

յարմար է այս կամ այն դերը կատարելու համար: Լուսինը երբէք իր դերը չի ուզում փոխել, կամենում է միշտ նշխար լինել, գտնելով, որ ինքը լուսափայլ է, ներմակ ու կորիկ, իսկ խորհրդաւոր է, երբ նշխարը օրերի ընթացքին նուազում է ու չի վերջանում, այլ նորից ծնուռ է:

Որքան մեծ ու հզօր է Աստուած: Այսանչացիք, փոքրիկս, Անմահ Թագաւորի ձեռքի գործերով, բոյլ տուր, որ մանկան հոգիդ մասնակից լինի գիշերուայ այս խորհրդաւոր բեմադրութեանը, բող որ երկների բեմի առջև երկրպագի Փառքի Թագաւորին, օրհնի նրան եւ փառարանի, բող որ հոգիդ սաւառնի անհունի մէջ: Հոգին սահմաններ չի սիրում, բաղցրիկս, արձակիք նրա քեւերը, որ Աստուած է տուել: Արծիւները պէտք է բռչեն: Եթէ ստիպսի, որ հոդի վրայ սողան գարշելի օձերի պէս, նրանք կը մահանան: Արծիւները պէտք է բռչեն:

Սիրելի փոքրիկս, Գիշերը աւարտում է իր պատմութիւնը: Արեգակի չարանենի ճառագայթները բոցեղեն զանգակներ դարձած ազդարարութեան են լուսաբացը: Լոյսը ողողում է տիեզերքը: Խոկ ծերուկ Գիշերը փակում է երկնային բեմի բաւշէ վարագոյները: Ակսում է մի ուրիշ գեղեցիկ պատմութիւն՝ կեանքի, լոյսի, գարնան ու սիրոյ:

Բարեւ Արեւ:

Բարի լոյս, փոքրիկ:

S. ԶԱՔԱՐԻԱ. ՔՃՆՅ. ՍԱՐԻԲԷԿԵԱՆ